ըստ հաւատարութեան նախկին Միացորդաց շինուածոյն ։

Այս դարձ արարեալ անտի մատուցին առ դատաւորն զարդիւնս քննութեան ։ Իսկ նա խնդրեաց վկայս յԱնդրիասէ՝ թէ արդարեւ իցե՞ն անկեալ որմք գաւթին, և միտանե՞ն անասունք 'ի գմբեթն՝ որպէս զի տացէ հրաման նորոգութեան ։ Եւ եած և կացոյց առաջի նորա զարս 10 յայլազգեաց Երուսաղէմի և 'ի Գեղջէ լերին Ձիթենեաց, որ և վկայեցին իսկ զաւերմանէ տեղւոյն ։ Յետ հաստատելոյ դատաւորին զայս ամենայն 'ի գիր, հրամայեաց Անդրիաս Պատրիարքին Հայոց նորոգել զտեղին ։ Եւ նորա ձեռըն 'ի գործ արկեալ շինեաց զգմբեթն, և ծեփեալ սպիտակացոյց զնա ներքոյ և արտաքոյ, նորոգեաց զվերին լուսամուտն, սալեաց քարիւ զյատակն, յարդարեաց զգաւիթն ամբողջ, շինեալ բարձրացոյց զորմս գաւթին շուրջանակի 'ի վերայ առաջին հիման, եւ մաքրեաց զտեղին յաղտեղութենէ 'ի քարանց և 'ի հողոյ ։ 'ի 1 Շապան ամսոյ, ՋԿԸ (1560) ։

ԳԼՈՒԽ ԼԸ.

Վէճ Յունաց ընդ Լատինաց ։ Բանութիւնք Արաբացւոց ։ Վանորայք Ս. Հրեշտակապետաց եւ Ս. Փրկչի ։ Վախճան Անդրիաս Պատրիարքի, և յաջորդելոյ զաթոռն Դաւթի ։ Եկեղեցին Ս. Աստուածածնի ։ Դուռն Ս. Փրկչի վանաց ։ Դռնապանք Ս. Աստուածածնի գերեզմանին ։

ՅԱՂԱԳՍ գրաւելոյ Լատինաց զվանկանս եկեղեցւոյն Բեթղեհէմի, գրեցաք 'ի Գլուխն ԼԶ ։ Առեալ 'ի բանից Տօսիթէոսի Յոյն Պատրիարքի, գրեսցուք արդ զվէճս նոցա հանեալ 'ի դատաստանական գրոց ։ Բանալիք այրին Ծնընդեան Քրիստոսի՝ յեկեղեցին Բեթղեհէմի, էր 'ի ձեռս Լատինաց, և Գերմանոս Պատրիարքն Յունաց ստէպ պահանջէր զայնս . և նոցա անհնարին թուէր տալ զնոսա, որոյ վասն բազմացան վէճք եւ կռիւք 'ի մէջ երկուց ազգաց, տեսեալ Գերմանոսի թէ կագելով ընդ Լատինս չկարէ վճարել ինչ, դիմեաց առ դատաւոր քաղաքին եւ ամբաստան եղեւ զնոցանէ . բռնութեամբ յափշտակեալ են ասէ զբա-